տարագն Նոցա, միայն պատարագէին 'ի վերայ Հրեշտակի վիմին ամիս 8. եւ դեգերեալ 'ի դրունս մեծամեծաց բազումս աշխատ եղեն, մինչեւ առին հրովարտակ արքունուստ. բայց ոչ որպէս կամէին, միայն զԳերեզմանն կարացին մտանել և պատարագել։

Իսկ 'ի սմին ժամանակի 'ի բաց թողեալ զառաջին բարեկամութիւնն դարձան յատելութիւն, գրգռէին նաեւ ըզ-Յոյնս ընդդէմ Հայոց։ Վասն զի 'ի տարածել Հայոց զսքփռոցն յատակս եկեղեցւոյն Բեթղեհէմի, ցուցին Նոցա ճանապարհ յետուստ կողմանէ, և առ այն չյօժարէին բնաւ, զի մի լցին ընդ իշխանութեամբ Հայոց, եւ բռնադատէին զնոսա բառնալ զայն և բանալ զճանապարհն, և այսպէս մախալով եւ քրտնջելով անցանէին ժամանակս ինչ։ Եւ զի Փոխանորդ Նոցին Ֆրա Մանուէլ ունէր բարեկամութիւն ընդ Թէոդորոս Պատրիարքի, զի բազում անգամ գտեալ էր դրամական օգնութիւն 'ի նմանէ։ Եւ եղեւ 'ի մեկնիլ Նորա յԵգիպտոս 'ի խնդիր դրամոց, զի էին 'ի մեծի նեղութեան. միաբանք Նոցին 'ի Բեթղեհէմ սկսան յուզել զկռիւ։ Գնացին առ Լատինս Լուսարար Սիմէոն վարդապետ և Դիոնէսիոս՝ խօսիլ ընդ նոսա 'ի վերայ այսր խնդրոյ, բայց Փոխանորդ Նոցին սկսաւ վարիլ ընդ նոսա խըրոխտ բարկութեամբ և սրամտութեամբ և խնդրել զհրովարտակն տեսանել թէ զինչ իցէ գրեալ 'ի նմա, և թէ Լատինք պայմանաւ վարին ընդ Յոյնս 'ի Բեթղեհէմ. և հիւսիսային դուռն Այրին իցէ սեփհական Նոցա, զոր Հայք իւրացուցին պատկերաւ եւ կանթեղիւ, եւ զճանապարհն խափանեցին, և այլ ոսոցին նման բանք։ Տեսեալ վարդապետաց զմեծաբանութիւնս Նոցին, ասեն՝ գտանել զհրովարտակն 'ի Դատարանի և ընթեռնուլ զայն, եւ գնալ 'ի Բեթղեհէմ և տնօրինել զխնդիրն, այլ նա պնդէր բանալ զճանապարհն։ Հայք ոչ ընկալեալ զխնդիր նորին մեկնեցան անտի, և ազդ արարին Դատաւորին, իսկ 'ի Բեթղեհէմ Տեսուչ և Լուսարար Նոցին ժողովեալ զգիւղական զինեալ Ֆէլլահս բռնութեամբ և կռուով բառնան զսքփռոցն, եւ եղեգամբ չափեալ ցուցանեն թողուլ զայնքան տեղի բաց, զի 'ի Թափօրս և 'ի Պատարագի 3 Քահանայք 'ի մի կարգ երթիցեն յԱյրն, եւ այս ճանապարհ լինէր առաջի